ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՎԷԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026

03 հունիս 2026թ.

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, ի դեմս տնօրեն Կարեն Ասատրյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի դեմս տնօրեն Խաչիկ Այվազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի տարածքում ծածկարանի վրա 90 կՎտ պիկային հզորության և նույն համալսարանի «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի տանիքներին 60 կՎտ պիկային հզորության արևային ՖՎ կայանի տեղադրման տեխնիկական հսկողություն» ծառայության (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **500000** (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում

վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում

արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի
և էներգախնայողության հիմնադրամ
ՀՎՀՀ 02580459
ք. Երևան, Սայաթ Նովա 29/1
Հեռախոս՝ (374 10) 58 80 11
էլ. փոստ՝ info@r2e2.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050422345051001

Տնօրեն
Կարեն Ասատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՎՀՀ 04229504
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ուստան, Թեհլերյան 14,
էլ. փոստ՝ gritig@inbox.ru
«Արդշինբանկ ՓԲԸ Նոր Նորք մ/ճ»
Հ/Հ 2472401646050000

Տնօրեն
Խաչիկ Այվազյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
3 հունիս 2026թ. կնքված
ՀՎԷԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	71351540/2	«Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի տարածքում ծածկարանի վրա 90 կՎտ պիկային հզորության և նույն համալսարանի «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի տանիքներին 60 կՎտ պիկային հզորության արևային ՖՎ կայանի տեղադրման տեխնիկական հսկողություն»	դրամ	500 000	1	Պայմանագրի կնքման օրվանից 1 ամիս ժամկետով /պայմանական՝ կախված շինարարական ընկերությունների հետ պայմանագրի տևողությունից/:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի
և էներգախնայողության հիմնադրամ
ՀՎՀՀ 02580459
ք. Երևան, Սայաթ Նովա 29/1
Հեռախոս՝ (374 10) 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
Ինեկոբանկ ՓԲԸ
h/h 2050422345051001

Տնօրեն
Կարեն Ասատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՎՀՀ 04229504
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14,
Էլ. փոստ՝ gritig@inbox.ru
«Արդշինբանկ ՓԲԸ Նոր Նորք մ/ճ»
Հ/Հ 2472401646050000

Տնօրեն
Խաչիկ Այվազյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
3 հունիս 2026թ. կնքված
ՀՎԷԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

/Հավելված 1.1/

Առաջադրանքի անվանումը՝
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի տարածքում ծածկարանի վրա 90 կՎտ պիկային հզորության և նույն համալսարանի «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի տանիքներին 60 կՎտ պիկային հզորության արևային ՖՎ կայանի տեղադրման տեխնիկական հսկողության աշխատանքներ

Առաջադրանքի տևողությունը

1 ամիս (պայմանական՝ կախված շինարարական ընկերությունների հետ պայմանագրի տեվողությունից):

Ծառայությունների մեկնարկի ամսաթիվը 2026թ. 03 Հունիս,

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Առաջադրանքի նպատակն է վերահսկել իրականացվող շինարարական աշխատանքների, համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին, որակի չափանիշներին, գործող շինարարական նորմերին և կանոններին: Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը, համապարփակ միջոցառում է, որը ներառում է շինարարության բոլոր փուլերը, որն ավարտվում է Ավարտական ակտի ստորագրմամբ (Կատարված աշխատանքների շահագործման հանձնման հանձնաժողովի ընդունման ակտ):

Տեխնիկական հսկողությունը կիրականացվի հետևյալ տեղանքում.

- **Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ավտոկայանատեղի տարածքում և նույն համալսարանի «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի վրա: (Հասցե՝ Ք. Երևան, Հ. Էմին 123/1)**

Խորհրդատուն պայմանագրի ստորագրումից հետո 3 օրվա ընթացքում պետք է մոբիլիզացնի անձնակազմը:
Աշխատանքների շրջանակը ներառում է.

- Այց շինհրապարակ և մեկնարկային հանդիպում Կապալառուի և R2E2 հիմնադրամի ներկայացուցիչների հետ:
- Կապալառուի կողմից ինժեներական սարքերի, տեղադրման, գրանցման և փորձարկման նկատմամբ (համաձայն Քաղաքաշինության նախարարության Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին Թիվ 44 հրամանի) վերահսկողության իրականացում:
- Բոլոր շինարարական աշխատանքների որակի և տեխնոլոգիական կարգի ստուգում, էներգաարդյունավետ միջոցառումների համապատասխանությունը նախագծային, շինարարական ստանդարտներին և կանոնակարգերին, տեխնիկական պայմաններին, ժամանակացույցերին:
- Իրականացված ծավալների չափագրում և հաստատում:
- Միջանկյալ ակտերի և ավարտական վկայականի ստորագրում (Կատարված աշխատանքների հանձնման ընդունման հանձնաժողովի վկայական):

- Շինարարության ընթացքում օգտագործված նյութերի համապատասխան որակի հավաստագրերի ստուգում:
- Դիտարկումների, մեկնաբանությունների և դրանց վերացման մասին տեղեկատվության գրանցում Շինարարության վարման մատյանում:
- Քաղաքաշինական տեսչական հսկողության, և այլ լիազոր ստուգող մարմինների կողմից իրականացվող վերահսկողության մասնակցություն, ներառյալ հայտնաբերված թերությունների ժամանակին վերացում,
- Շինարարության ժամանակացույցի մոնիտորինգ.
- Կատարված աշխատանքների և թերությունների դեպքում ցուցակի կազմում և դրանց վերացման ժամկետներ սահմանում.
- Սառեցված (կոնսերվացված) կամ կասեցված օբյեկտների ընդունումը շինարարական կազմակերպություններից, ինչպես նաև դրանց առաձնացումը ակտով՝ նշելով այդ օբյեկտների տեխնիկական վիճակը:
- Ընդունման ակտերի վերանայում և հաստատում:
- Բոլոր տեսակի թաքնված աշխատանքների ակտերի պատրաստում և հաստատում:
- Մասնակցություն բոլոր տեսակի սարքավորումների և ինժեներական ցանցերի փորձարկման հաշվետվությունների պատրաստմանը և հաստատմանը (պատրաստված հավաստագրված լաբորատորիաների կողմից):
- Առողջության և աշխատանքի անվտանգության կանոններին համապատասխանության մոնիտորինգ:

Որակավորման պահանջներ

Ընկերության որակավորման պահանջները.

- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման լիցենզիա 1 դաս.(ա և բ ենթատեսակներ)
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության, էներգաարդյունավետ միջոցառումների իրականացման փորձ (3 նմանատիպ պայմանագիր);
- Ապահովում որակի վերահսկման գործիքակազմով և սարքերով, տրանսպորտային միջոցներով, համակարգչային և գրասենյակային պարագաներով:

Խորհրդատուի հիմնական անձնակազմը պետք է բաղկացած լինի.

- Քաղաքացիական շինարարության ինժեներ,
- Ինժեներ էներգետիկ,

Հիմնական անձնակազմի որակավորման պահանջները.

Քաղաքացիական շինարարության ինժեներ

- Բարձրագույն կրթություն շինարարության ոլորտում,
- Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման,
- 3 տարվա փորձ (3 նմանատիպ պայմանագիր) :

Ինժեներ էներգետիկ

- Բարձրագույն կրթություն էներգետիկայի ոլորտում,
- Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման 3 տարվա փորձ (3 նմանատիպ պայմանագիր),

2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շինարարական աշխատանքները, վերահսկելու համար Խորհրդատուն պետք է այցելի շինհրապարակ, պատրաստի հաշվետվություններ և Պատվիրատուին հանձնի հետևյալ արդյունքը.

Արդյունք 1 - Վերջնական հաշվետվություններ շինարարական աշխատանքների ավարտից հետո: Հաշվետվությունների բովանդակությունը.

Կատարված շինարարական աշխատանքների և նախագծային փաստաթղթերին, որակի ստանդարտներին, առկա շինարարական նորմերին և կանոններին համապատասխանության մասին վերջնական եզրակացություն՝ «Շինարարության որակի նկատմամբ տեխնիկական վերահսկողություն իրականացնելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարության թիվ 44 հրամանով:

Հաշվետվությունները ներկայացվում են հայերեն՝ էլեկտրոնային և թղթային տարբերակներով (մեկ օրինակով) շինարարական աշխատանքների ավարտից հետո: R2E2 հիմնադրամը պետք է վերանայի և մեկնաբանի այն ներկայացնելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

Բոլոր արդյունքները պետք է հասցեագրվեն Տեխնիկական բաժնի ղեկավար պրն Հրանտ Տեր-Գաբրիելյանին hrant.tergabrielyan@r2e2.am,
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,
Սայաթ-Նովա 29/1, Երևան, Հայաստան:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
և էներգախնայողության հիմնադրամ	ՀՎՀՀ 04229504
ՀՎՀՀ 02580459	ՀՀ, Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14,
ք. Երևան, Սայաթ Նովա 29/1	էլ. փոստ՝ gritig@inbox.ru
Հեռախոս՝ (374 10) 58 80 11	«Արդշինբանկ ՓԲԸ Նոր Նորք մ/ճ»
էլ. փոստ՝ info@r2e2.am	Հ/Հ 2472401646050000
Ինեկոբանկ ՓԲԸ	
h/h 2050422345051001	
Տնօրեն	Տնօրեն
Կարեն Ասատրյան	Խաչիկ Այվազյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
3 հունիս 2026թ. կնքված
ՀՎԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայություն											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/2	«Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի տարածքում ծածկարանի վրա 90 կՎտ պիկային հզորության և նույն համալսարանի «Ուսմունք» դպրոցի մասնաշենքերի տանիքներին 60 կՎտ պիկային հզորության արևային ՖՎ կայանի տեղադրման տեխնիկական հսկողություն»	-	500 000	500 000	-	-	-	-	-	**500 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի
և էներգախնայողության հիմնադրամ
ՀՎՀՀ 02580459
ք. Երևան, Սայաթ Նովա 29/1
Հեռախոս՝ (374 10) 58 80 11
Էլ. փոստ՝ info@r2e2.am
Ինեկոբանկ ՓԲԸ
հ/հ 2050422345051001

Տնօրեն՝
Կարեն Ասատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
ՀՎՀՀ 04229504
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14,
Էլ. փոստ՝ gritig@inbox.ru
«Արդշինբանկ ՓԲԸ Նոր Նորք մ/ճ»
Հ/Հ 2472401646050000

Տնօրեն
Խաչիկ Այվազյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
3 հունիս 2026թ. կնքված
ՀՎԷԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայությունների գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
3 հունիս 2026թ. կնքված
ՀՎԷԷՀ-ՄԱԾՁԲ-20/2026 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և ---------- -ի (այսուհետ՝ Կատարող) միջև ---. ա/ա -ին կնքված N -- ---------- գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը ---թ.---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն